ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ Հայկ Հարությունյանի՝ Բեյրութ կատարած այցի մասին

ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ

Հայկ Հարությունյան

ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ

Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/

Բեյրութ (Լիբանանի Հանրապետություն) 2017թ. դեկտեմբերի 13-15-ը

ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ

ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողով (UNECE)

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Մասնակցություն «Վերականգնվող էներգետիկայի վերաբերյալ ՄԱԿ-ի Զարգացման Գործակալության ծրագրի եզրակացությունները և առաջընթացի ուղին» խորագրով փակման սեմինար-համաժողովին :

ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ

Սեմինարի ընթացքում քննարկվեցին վերականգնվող էներգիայի, էներգախնայողության, էներգիայի հասանելիության զարգացման հնարավորությունները, վերականգնվող էներգիայի նախագծերի միջազգային ֆինանսավորման մարտահրավերները: Ներկայացրեցի Հայաստանի փորձը վերականգնվող էներգետիկայի բնագավառում, ներդրումների խթանման հնարավոր քաղաքականությունը:

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

Համաժողովի ժամանակ ներկայացրեցի Հայաստանի փորձը վերականգվող էներգետիկայի ոլորտում: Մերձավոր Արևելքի և Աֆրիկայի մի շարք պետությունների ներկայացուցիչների կողմից այն գնահատվեց որպես օրինակելի: Ցանկություն հայտնեցին այցելել Հայաստան և ծանոթանալ մեր փորձին : Այցի ժամանակ նաև հանդիպեցի Լիբանանի էներգետիկայի նախարարի հետ: Քանի որ Լիբանանում դեռևս լուծված չէ շուրջօրյա էներգամատակարարման հարցը և պետությունը ահռելի գումարներ է ծախսում սուբսիդավորման ծրագրերի վրա և նաև այն հանգամանքը, որ երկրում ընդհանրապես զարգացած չէ արևային էներգետիկան, պայմանավորվեցինք, որ մյուս տարի կազմակերպենք վերականգնվող էներգետիկայով զբաղվող ընկերությունների փոխադարձ այցեր՝ փորձի փոխանակման և ներդրումային հնարավորություններին ծանոթանալու համար: Հանդիպեցի նաև Լիբանանում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Սամվել Մկրտչյանի, Լիբանանի նախկին էներգետիկայի նախարար Արթուր Նազարյանի և Բիբլոս Բանկի նախագահ Ֆրանսուա Բասսիլի հետ: Քննարկեցինք Լիբանանի ֆինասական կառույցների մասնակցությունը Հայաստանում իրականացվող էներգետիկայի ոլորտի ներդրումային ծրագրերում :

ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ
ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ՀԱՅԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
18.12.2017թ.